

ՀԱՅ ԼԵՋՈՒԻ ՈՒՍՈՒՄՆ ՅԱՐԵՒՍՈՒՏԱ

(Տես յ'էջ 153)

Ուրիշ անգամ ալ, իսալացի հայպիտաց վերայ խօսած ատեննիս, առիթ պիտի ունենանք յիշել այն յարաբերութիւնները զոր ունեցեր է Պայրըն ընդ Մխիթարեանս Վենետիկոյ: Հետաքրքրական պիտի ըլլան առ այժմ հետեւեալ քաղաածները Թումաս Մորի հրատարակած Լորտ Պայրընի յիշատակարաններէն, որոց զաղդիարէն թարգմանութիւնքն ալ տպագրուած են ի Պարիս ի 1834—2:

ՎԵՆԵՏԻԿ 4 ԴԵԿՏ. 1816 (առ Մ. ՄԵՐԲԷ).

« Սկսայ և կը շարունակեմ զոչսումն հայ լեզուի. զոր կրցածիս լափ կը սովորիմ հայ վանքի մը մէջ, ուր ամէն օր կ'երբամ մեծապէս գիտուն կրօնաւորք մը դաս ասնելու: Շատ հետաքրքրական տեղեկութեանց խելաւուտ եղայ, և որք անօգուտ չեն այս արեւելեան ժողովրդեան մատենագրութեան և բարոյց ակաւումն: Եկեք մը կայ հոս, եկեղեցեան ու մենաստանաւ, ուր ինկնաւն կրօնաւորք կը բնակին, և յորոց ոմանք գիտութեամբ ու տաղանդով լի անձիք են: Տպարան մ'ալ ունին, ու մեծ փոյր ու ջանք ազգերին յուսաւորելու: Ինչ անանկ կ'երևնայ ք չեզոքեմ' որ կրկին է, Բր-Բր-Բր-Բր-Բր, շատ դժուարութիւնք ունի, բայց անյադրիչ չեն, գեր այնպէս կը յուսամ, և պիտի շարունակեմ: Պետք մը կը զգայի միտքս դժուարին ուսմամբ մը զբաղեցնելու, այս ինչ դժուարագոյնն էրևցաւ, զոր կրնայի գտնել, ու խարտոցի տեղ պիտի ծառայէ օձին կրծելուն »:

ՎԵՆԵՏԻԿ 5 ԴԵԿՏ. 1816 (առ Մ. ՄԵՐԲԷ).

« Զրօնելու համար՝ ամէն օր Հայոց մենաստանը կ'երբամ հայ լեզուն ուսանելու: Տեսայ որ միտքս սրունելու պետք ունի կարծր միտքի մը վրայ, և ընտրեցի զայս՝ ամէնէն աւելի դժուարինը զոր կարացի գտնել իրրեզուարութիւն մը՝ շարժարանաց եմբարկելով

մտադրութիւնս: Սակայն ձեռ լեզու մ'է, և աստատպէս կը վարձատրէ ով որ զայն սորվելու աշխատանքին չհրաժարի: Ես փորձ մը կ'ընեմ և պիտի շարունակեմ, բայց հիմկոն հիմա բան մը չեմ կրնար գրուցել ոչ յիտաւորութեան և ոչ մանաւանդ յաջողութեան նկատմամբ: Շատ հետաքրքրական ճեշագիրք կան ի մենաստանիս, ինչպէս նաև գրքեր. մանապէս կան յոյն, պարսկ և տարի հեղինակաց գրուածոց հին բարգմանութիւնք՝ ուրոց բնագիրք կորսուած են, ասանց խօսքն ընկելու միաբանից երկասիրութեանց: Զորս տարի յառաջ Գաղղիացիք հայերէն լեզուի արքոն (chaire) մը հաստատեցին. երկուշաբթի աստուտ քսան աշակերտք ներկայացան, ընցած երիտասարդական հասակի վստահութեամբ և անկողն ետանգեամբ: Իրենց ազգին արժանաւոր հաստատումութեամբ և ընդհանուր աշխարհակալութեան հոգով մինչև հիկզ, շաբթի շարունակեցին, յորում այրութեան իսկանքներոյ տառովը՝ քսանէն հեգետասանը յաղորդեցան: Ստոյգ է որ աշխարհեայ վատերից մ'է. զայս բանք՝ գիտնիք արդարացրելու համար: Բայց Գաղղիացոց բնաւորութեան յատուկ է շուտով ճանճրանալը, և յամենայնի անանկ վարուիչ ինչպէս կ'ընեն իրենց բազաւորին հետ »...

ՎԵՆԵՏԻԿ 24 ԴԵԿՏ. 1816 (առ Մ. ՄՐԲԷ).

« Աստուտուն կոնտուայովս ծովը կը կրտրեմ, ու կ'երբամ հայերէն խօսելու սրբոյն Ղազարոս մենաստանին կրօնաւորաց հետ, ու անձնակ միայն օգնելու ի սրբագրեց զանգղիաբէն լեզուն՝ անգղ-հայ քերականութեան մը զոր տպագրելու հետ են »:

ՎԵՆԵՏԻԿ, 27 ԴԵԿՏ. 1816 (առ Մ. ՄԵՐԲԷ).

« Աստուաները իմ հայկականի ուսումնս կը շարունակեմ, ու կը հսկեմ գործակից ըլլալով

ի շարագրութիւն անգղիական մասի՝ անգղ. հայ քերականութեան մը՝ որ այժմ կը տպագրուի ի ստորք Ղազար: Մեծաւորը եպիսկոպոս մ'է ոչ ամենափաստաւոր ժերմէնի մը.... հայրն Յարութիւն ալ գիտուն ոչ քարեպաշտ անձ մ'է: Երկու տարի կեցած է յԱնգղիա »:

ՎԵՆԵՏԻԿ, 2 յունուար 1871 (առ Մ. ՄԵՐ.)

« Էր յղեմ առ քեզ, ուրիշ ծրարով մը, քանի մի բերք անգղիարեն—հայերեն քերականութենէ ի պիտոս Հայոց, գոր քաջաւերցի և տպագրել տո՛ւի. ինձ համար հազար փրանքի աւելի չեղած ծախքս: Էր շարունակեմ ուսումնս նոյն շնորհիւ, առանց արագ յատաւորեմութեան, բայց ամէն օր քիչ քիչ յաւաւելով: Հայրն Յարութիւն իմ քիչ մը օգնելովս իր իտալական քարգմանութեան յանգիստեան, ետեւ և ձեռագրելու քերականութեան մը առ ի դիւրել Սնգղիացոց գոռոռնն հայերենի. և երբ ձեռագրին աւարտի՝ պիտի տպագրուի »:

Էր փափաքեի՜նք գիտնալ թէ արեւոյ կը գտնուի՞ն յԱնգղիա, յՕքսֆորդ կամ ի Քեյմպրիձ և կամ ուրիշ տեղութեան տպագրական հայ նշանագիրք. կ'ենքադրեմ որ գիտես թէ շատ տարիներ յառաջ՝ երկու վիստոն եղբարք հրատարակեցին յԱնգղիա Հայոց պատմութեան սկզբնագիր մը՝ շատին քարգմանութիւնն ալ իրենց կողմանէ աւելցրելով միթէ կան դեռ եւս այդ տպագիր տաք և ո՞ր կը գտնուի: Կ'աղաչեմ տեղեկացիր այս հերոցն՝ քո իմաստուն ժանօրէնիդ:

« Երբ այս քերականութիւն (այսիկքն հիմա տպագրուելու վրայ եղածը) հրատարակի, արեւոյ յանձնատու կ'ըլլա՞ս քառասուն յիսուն օրինակ տաճաւ, որ հնգրասանի չափ ոսկւոյ կ'ըլլայ քնդի, որպէս զի վաճառքի հանելով՝ ուսումնականաց հետաքննութիւնը փութնա: Այո՛ կամ ոչ ըսէ ինձ, որպէս և հաճոյ երեւայ քնդ: Կրնամ գրեզ վատահաջրնէ որ այլ և այլ գրքեր կան հոս, և մանաւանդ ամենահետաքննական գրչագիրք և գլխաւորաբար հիմա կարտաւած յոյն սկզբնագրոց հին քարգմանութիւնք. իմաստուն և արգոյ միաբանութիւն մ'է, և իրենց շնորհիւ ուսման մեծ

եռանդեմը ետեւ եղած են՝ Պոնափարքի Ժա. մանակէն քանի մի գաղղիացի գրագետք »:

Հետեւեալ հաստաձն գտնուած է Լորտ Պայրընի Թղթոց մէջ, և կ'երեւայ Թէ մեր հիմայ յիշատակած հայ—անգղ. քերականութեան յառաջարանի տեղ գրուելու համար գրուած է:

« Անգղիացի ընթերցողը անշուշտ պիտի գարնանայ՝ այսպիսի գրութեան մը ի գոռոս տեսնելով զիս ընկերացած, և քերես ուղեւայ զիս շնորհագետ մը կարծել, մինչ այդպիսի համարման մը արժանանալէն շատ հետեւեմ: Եւ որովհետեւ չեմ ուզեր կամօքս զինքս սխալի մէջ ձգել, համառօտիւ՝ որչափ կաւելի ի գոչընձեմ թէ ի՛նչ կերպով մասնակից եղայ գրքիս շարագրութեան, և ի՛նչ պատճառներով համոզուեցայ առ այն: Երբ 1816 ին հասայ ի Վենետիկ, տեսայ որ մտքիս վիճակը ուսման մը հետեւելու կարեւոր պէտք կը գգար, և այնպիսի ուսման մը որ երեւաւ կայրութեան քիչ տեղ ձգէ, ոչ զոռոտութիւններ հանէ դիմացս: Եւոյն միչոցին՝ տպաւորութիւն մը ըրած վրաս, ինչպէս անշուշտ ուրիշ ամէն ձանապարհորոց, արդոյն Ղազարոս մեծատառնիկն միաբանութիւնը, և ինձի երեւցած թէ միաբանական հիմնարկութեան մը ամէն օգտակարութիւններն ունենան, առանց քերութեանց հաղորդ ըլլալու: Կարգաւորութիւն, մաքրութիւն, քաղցրութիւն քարոց, մշտնադիւր չեմտեանդութիւն, հանձար և առաքնութիւն որ այս ոչխտին միաբանելոց վրայ կը տեսնուի, շատ յարմարականք են աշխարհի մարդոն մը արտին մէջ տպաւորութիւն երեւոյ թէ ուրիշ և շատագոյն աշխարհք մը կայ: Ազնիւ առ հարաւահարեալ ազգի մը քահանայք են որ հաղորդ եղած է տարագրութեան և գերութեան Հրէից և Թուրքաց: Առանց միոյն պէս դաժան և միայն նման գերի ըլլալու, այս ժողովորդը դիգած է հարստութիւն առանց վաշխի և ձեռք ձգեր այն ամէն պատիւն՝ որ գերութեան մը մէջ կրնան առաջադի, առանց խարդախութեան: Բայց ինչ ալ ըլլայ իրենց վիճակը ապագային մէջ, իրենց երկիրը միշտ պիտի մնայ տիեզերաց վրայի ամենէն աւելի հետաքննականներուն մէկը, և շնորհիւն աւելի հրապարակի ինչեւոք

համար՝ քերականութիւն պետք չունի բայց երկ
աւելի ժամօրանալու: Երբ տուրք գրող խօս-
քին տրուած մեկնութիւնն ուղիղ է, Հա-
յաստանի մէջ է դրախտը, որ այնչափ ծան-
րագին եղաւ Աղստան սերնդեան երջանկո-
րեան: Ի Հայաստան նախ ցածեան ջուրք
չընկեղի և աղաւթին վնասեցաւ: Բայց դը-
րախտին անհետանալէն կրնանք բուռն գտնող-
քնաւորութիւն աղիտից աշխարհիս »:

ՎԵՆԵՏԻԱ, 3 ՄԱՐՏ 1817 (առ Մ. ՄԵՐԲԵՅ).

Հայ քերականութիւնն հրատարակուեցաւ.
բայց իմ հայկական ուսումնասիրութիւնք առ
այժմ ի կտի մնացած են ինչո՞ւն գիտոյ ցա-
ւերս քիչ մը մեղմանան »:

ՎԵՆԵՏԻԱ, 25 ՄԱՐՏ, 1817 (առ Մ. ՄԵՐԲ.).

« Հայ քերականութիւնն հրատարակուե-
ցաւ. այսինքն մին յերկուց, միւսն դեռ եւս
ձեռագիր է: Հիւանդութիւնս ամիս մը աւ-
րողջ տան մէջ արգիլեց զիս. ուստի և լիցցայ
հայերենին ետեւ ըլլալ »:

ՎԵՆԵՏԻԱ, 31 ՄԱՐՏ 1817 (առ Մ. ՄԵՐԲ.).

« Զեմ գիտեր գրեցի առ քեզ քէ երկու
բողոք բարգմանեցի, որունք մասն են քրիս-
կոյնքեան մը սրբոյն Պաշտօնի ընդ կորնբա-
ցիս, և մեր բարգմանութեան մէջ լկան, այլ
ի հայկականին միայն. և շատ ուղղափառա-
կանք կը բռնին ինձ: Մաքուր և Ստորագրու-
ածով բարգմանեցի զանոնք յանգղիական »:

ՎԵՆԵՏԻԱ, 8 ԳՈՒՆԻՍ 1817 (առ ՄԵՐԲԵՅ).

« Թողորք քեզ կը յանձնեն երկու հայ կրօ-
նաւորք որ գնան յԱնգղիա, անտի ի Մադ-
րաս նաւարկելու համար: Բերեն առ քեզ օ-
րինակս ինչ ի Քերականութիւնէն գորս յանձն
աօր ստանալ՝ երկ յիշողութիւնս զիս չի խա-
րեր: Երբ կրնաւ իրենց օգտակար ըլլալ ծո-
վային նաւարկութեանց կամ Հնդկային ըն-
կերութեան մէջ ծանօթից ձեռքով, կը յոշտամ
որ չես մերժեր առ նկատմամբ զիս պարտը:

կան ընկնու. որովհետեւ իրենք, ինչպէս նաև
բողոք միաբանութիւնն, մեծ մտադրութիւն
և բարեհաճութիւն ցուցին առ իս Մեկնութիւն
հասնելու ի վեր: Մին կոչուի Հ. Ստորագրու-
ածան, և միւսն Հ. Սարգիս Թեոդորոս
սեան. կը խօսին իտալերեն, ոչ հաւանօրեն
նաև. գաղղիարեն և քիչ մը անգղիարեն: Զեր-
մագին կը կրկնեն յանձնարարութիւններս. քե-
րս կարենաւ դիտել իրենց ժամանակաւոր-
դրութիւնը, և տալ կամ ստանալ Հնդկաստանի
համար յանձնարարական գրեր »:

ՎԵՆԵՏԻԱ, 27 ԳՈՒՆԻՍ 1818 (առ ՄԵՐԲ.).

« Հայրս — այս ինքն հայ հայրս, —
հայրն Յարութիւն՝ ի դիմաց մեծատառնիս
մեր ուրիշ հարց, կը դրկէ ծրարեալքս՝ հան-
դերձ բարեկերպով: Եւսերեայ բնագրին ի վա-
ղուց կորստած և վերջի ատեններս յայտ-
նուած հատուածոց բարգմանիք, պատշաճ սե-
պելով յայտագիր մը հրատարակել, յորոց վեց
օրինակ քրիս ինտ կ'ընդունիս, կը խնդրուի
իրենց ընկերագիրք գտնել երկուս համալսա-
րաններէն, յիմաստնոց և ի տգիտաց որ տը-
գիտութիւններէն կ'ոգնեն մեկդի նետել: Զայս
կը խնդրէ վաղըս, գոր կը խնդրեմ և ես, և
գոր դռ խնդրես ուրիշներէն »:

Իւր Հայ ու Անգղ. բառարանի յառաջա-
բանին մէջ հեղինակն Հ. Բարութիւն Ա-
գերեան հետեւալ խօսքերով կը բացատրէ
իւր երախտագիտութիւնն առ Լորտ Պայրըն՝
Միթթարեանց վաստակոց ցուցած խնամ-
քն: Բետ յիշատակելոյ զքաջաբերիչ օգնա-
կանութիւն զոր կ'ընդունէր յայլեալ Անգ-
ղիացուց, կը յաւելու. « ասոնց մէջ պար-
ծանօք կը յիշեմ զԼորտ Պայրըն, գէշակա-
նուն ի քերթողս Անգղիոյ՝ իրենց քերթու-
թեան ամենապայծառ դարուն: Հայերէն լե-
զուն մեր քով սորվելէն ետքը, ստիպեց զմեզ
հրատարակել փոքր քերականութիւն մը անգ-
ղիարէն լեզուի ի Հայ՝ Հայոցս համար, ու
ձեռնտու եղաւ ի յօրինումն Հայ քերակա-
նութեան անգղիական լեզուով իր ազգակցաց
համար: Եղուարդ Լոմպ սպետն, մեծ հան-
ձար տէր բրիտանարդ մը՝ ատեն անցնելէն
ետքը հրատարակել տուաւ զայն տպագրու-
թեամբ: Վերջապէս սպետն Յոհան Բրանդ
Վ. Ա. համալսարանին Կամբրիջի, տեսնե-

լով որ այս երկու քերականութիւնք բաւական չեն ի նույզ զպէտս ուսումնասիրաց, և իմանալով որ մենք հետաքննուտ ենք ի յօրինումն բառգրոց ի փոխադարձ գործածութիւն անգղիացւոց և հայոց, իր օգնութիւնը խոստացաւ մեր այս ձեռնարկին »:

Ի վերջմանէ, ի Յէլեոփօլիսն Թոմաս Մուրի, հրատարակեալ ի Լորտ Ռըսըլէ (1853) այս ծանօթութիւնը կը գտնենք յիշատակագրին ի 10 հոկտ. 1819. « Սրբոյն Մարկոսի եկեղեցին գնացի՝ պատարագի մը ներկայ գտնուելու. բայց շատ ուշ էր: Անտի գնացի ի կղզին հայ կրօնաւորաց. վայելուչ տեղի մը, և դիրքն ալ անմասն. ըստիւր տպարան մը ունին, ուր հայերէն լեզուով գրքեր կը հրատարակեն »: Կը տեսնուի ուրեմն որ ինքն Մուր յայց ելած էր սրբոյն Ղազարու կողմէն:

★ ★

Պայրընէն ետքը Անգղիացւոց մէջ հայկական լեզուի ուսմամբ զբաղողն եղած է Սոլոմոն Կեսար Մալան երէցն, վարդապետ (նորադանդ) աստուածաբանութեան և որդի Կեսար Հենրիկ Աբրահամ երեցու, որ աւետանի աստուածաբանի և քարոզչի անուն ունէր ի Փենուա իր կրօնակցաց մէջ: Մալան որդի՝ որոյ վերայ է մեր խօսքը, ծնած է ի 22 ապրիլ, 1812, ստրված է յ'Ասֆօրթ, ի վարժոցն Edmund stall, որ և մրցանակի կամ զպրոցական օգնութեան արժանաւոր սեպուած սանկրիտ ու հեբրայական լեզուաց մէջ յառաջադիմութեան համար: 1838ին գրեց ի Կալվաթա՝ վարդապետ դասական լեզուաց յեպիսկոպոսական դպրոցի (Bishop's College) տեղւոյն, ուր և մնաց ցամի 1840. Տարի մը յառաջագոյն Բենգալայի աւիական ընկերութեան քարտուղար անուանուած էր և եկեղեցական զանազան աւագութեանց բարձրացած:

Զմիւռնիոյ մէջ գտնուած ատենին ետեւեղաւ հայ լեզուի ուսման, և ուզելով բուն իսկ իր խօսքերն երկրորդել « որովհետեւ շատ սիրեց և զբանջացաւ լեզուին վրայ՝ ալ չուզէց ետ կենալ անոր ուսմանէն »: Այլ և աւօթքներ և հոգեւոր գրքեր թարգմանեց ի հայէ յանգղիականն. ինչպէս Եւդոքիացի Հ. Մատթէոս վարդապետի Մթաթաթիւսն է՝ չորս շաբաթ Փրիթաթի (Meditations on our Lord's Passion, 1863) և Պիլի հանգաղարկոյ աղօթից (Thoughts for every day in Lent, 1867): Իր գրութեանց մէջ կարեւորագոյնն է՝ Կենսի և Ժամանակի սրբի Քրիստի Լուսնաբերը, որ ինչպէս յայտնի է՝ հիմնադրի պաշտօնական է հայաստան եկեղեցւոյ (Vie et epoque de S. Gré-

goire l' Illuminateur), թարգմանեալ ի հայ լեզուէ և տպագրեալ ի Լոսանոն ի 1868. Եւ որովհետեւ այս տպագրութիւն վաճառքի դրուած չէ, օրինակաց մեծագոյն մասը ի Կալվաթա զրկուած ըլլալուն, անտարակոյս մանրամասն տեղեկութիւն մը տալ՝ հաճող պիտի ըլլայ մը ընթերցողաց: Երթաթաթիւսն մէջ համառօտ տեղեկութիւն մը կուտայ Հայաստանեայց եկեղեցւոյ և հայ ժողովրդեան վրայ, ուստ լեզուով գրուած քանի մի պաշտօնական գրութիւններէ թարգմանելով. ինչպէս 1843 տարւոյն ներքին մատակարարութեան նախագիծ օրինակը, յորմէ օրինակ մը ընդունեցաւ Մալան ի Բլաքմոր (Blackmore R. W.) երիցուէ, որ ինքն ալ ընդունած էր ի Կերասիսէ այն ժամանակին Հայոց պատրիարքին, որուն այցելութեան եկաւ յիշմածին զօրավարն Մուրաւիէ, ինչպէս կը պատմէ այս ճանապարհորդ: Ասկէ կրնանք հետեցընել թէ համառօտութեան մէջ տրուած տեղեկութեանց ճիշդ են: Երեք դիւի բաժնուած է այս ծանօթութիւն. և նախ Հայոց թագաւորութեան ու ժողովրդեան վրայ (3-22), երկրորդ Հայոց եկեղեցւոյն (23-50), և երրորդ Հայոց նուիրապետութեան վրայ (51-66). Երթաթաթիւսն ետք գրուած է՝ նոյնպէս երեք մասի բաժնուած, պատմութիւն մտից քրիստոնէութեան ի Հայս. և նախ Գործք և վկայաբանութիւն սուրբ առաքելոյ թաղէի, թարգմանուած ի հայկական տպագրութիւնէն Վենետիկ 1853 (66-99). երկրորդ՝ Գործք և վկայաբանութիւն սուրբ առաքելոյն Բարթողիմէայ, թարգմանուած նմանապէս ի հայ տպագրէն Վենետիկ ի 1854 (99-104), և երրորդ վարձ ժամանակ սրբոյն Գրիգորի Լուսաւորչի, թարգմանեալ ի հայ բնագրէն Մատթէոս վարդապետի Եւդոքիացւոյ հրատարակելոյ ի Վենետիկ ի 1749 (005-188): « Գրութեան առաջին մասը պատրաստելուս ատեն, կ'ըսէ Մալան, երկու բանի մէջ հարկ էր ինձ ընտրութիւն ընել. կամ ետեւ ըլլալ ընտրութեան նիւթերու և գրել քննադատական պատմութիւն մը սրբոյն Գրիգորի, և կամ արդէն եղածը թարգմանել, հիմնուելով ընդունելի չեղիականութեանց վրայ, օրինակ իմի՛ Ագաթանգեղոսի կամ Սիմէոնի Մետափրաստեայ, և որոյ չեղիական հայ մ'է, վառուած հայու մը համակրութեամբ առ « արեգակն Հայաստանեայց » ինչպէս իր հայրենակիցը կը կոչեն զուրբն Գրիգոր: Այս ընտրութեան մէջ նախամեծար սեպեցի երկրորդը, զանգի նպատակաւ ոչ այնչափ է որոշել զգնաւորութիւն ի կեղծեաց, կամ համանականը ի պարզապէս անվաւերականաց, որչափ անգ-

դիական լեզուով պատմութիւնն ընել առաջին պատրիարքին և պաշտպանին Հայաստանեայց՝ անանկ ինչպէս որ հասարակաբար ընդունուած է իր եկեղեցւոյն մէջ, առանց իմ կողմանէն մեկնութիւն մը աւելցնելու, բայց ի քանի մը բառէ կամ ծանօթութիւն մը տալէ՝ զոր հարկաւոր սեպած եմ, և այս դիպուածին մէջ՝ չանցներ եմ միշտ փակագծի մէջ առնուլ իմ կողմանէ գրուած տողերը։ Ուստի որոած ուրիշ բան չէ՝ բայց քերական նական թարգմանութիւն մը, և մասնաւոր դարձուածներն ալ դիտմամբ պահել եմ որպէս զի հասկըցնեմ ընթերցողին թէ ինչպէս սկզբնազերին սասնին ալ թարգմանութեանն իմաստը միայն հեղինակին կը վերաբերին և ոչ թէ ինձ յատուկը են ։

Բայց յայս երեց զխոց Թաղէի, Բարթուղիմէյ և Ս. Գրիգորի վրայ, Մալանք միտք ունէր ուրիշ ճինգ գլուխ ալ աւելցնելու, Բայց անոնք այս հրատարակութեան մէջ չանցան, ու ժամանակ անցնելէն ետք տպագրուեցան։ Առաջինն է՝ Գառնուկէն հառապ Եկեղեցւոյ Հայտարարեայ, որ Ֆորթիքի հարկաւորին Հայաստան եկեղեցւոյ վրայ գրած գրքին մէջ տպագրուեցաւ (249—280)։ Թարգմանիչն դիտել կուտայ որ «Աս թարգմանութեան ձեռք գրարկի Յովսէփայ Տոլորուրդի իշխանին ու երբեմն Հայոց կաթողիկոսի առաւ լեզուով գրուած երկասիրութենէ մը տպագրելոյ ի Պետերբուրգ ի 1799, և որ ցայսօր այս նիւթիս վրայ եղած հրատարակութեանց մէջ ընտրելագոյն համարուածն է։ Թէպէտ և այնպէս կը թուի թէ ի հայերենէ թարգմանուած է՝ խորագրէն դատելով, բայց մէկէն իմացայ որ բառ առ բառ թարգմանութիւն է Գառնուկէնի հաւատոյ Հայաստանեայց եկեղեցւոյ զոր Շրտստի գերբ ու ծանօթութիւններով տպագրեր է յիւր գիրան Գառնուկէնի Հայոց։ Ուստի հայկականին վերայէն թարգմանեցի զայն յանգլիարէն, բաղդաւաճով զսկզբնագիրն ընդ առաւ թարգմանութեան, որ բաւական հաւատարիմ է։ միայն թէ ի բաց թողով զերմանացի ուսուցչին հմուտ և քննադատական ծանօթութիւններն, Բայց խիթալով որ չըլլայ թէ սխալիմ իրեն հեռակովով, գրեցի ի Պետերբուրգ, և շնորհիւ բարեսիրութեան մեծափառ Տրկալովիչին, նախկին նախարարի ուսմանց, իմացայ ի Յ. Դ. Դելիանովէ որ հայագգի մէջ, ծերակուտի անդամ և պետական պաշտօնեայ, հասարակաց կրթութեան պաշտօնարանին անդամ և տեսուչ կայսերական մատենադարանին թէ Յովսէփ կաթողիկոսին ձեռքով եղած ուսու թարգմանութեան հայերէն սկզբնագրին օրինակ չկայ, որով

Շրտսէրի քրտածքը կրնանք հայաստան եկեղեցւոյ հաւատոյ ճշմարիտ քաջատրութիւն համարիլ. որովհետեւ կաթողիկոսն զԱստուած և զմարդիկ վկայ կը կոչէ որ յամենայն ի ճշմարտութեան է։ ու սակարեգ կը կարգայ զորոնք կը համարին սխալ գտնել այն դաւանութեան մէջ։ Ուստի կրնանք վստահիլ այս գրուածին վաւերականութեան վրայ, զիտնալով նաև յայլուստ որ այս դաւանութիւնը տպագրուած է միշտ ի զլուս ժամագրոց որ ի գործածութեան է Գրիգորեան կամ Ելմիածնական կոչուած մասին մէջ, ուր է հռովմական կամ ի բուն Հայոց անկուտեղ տպագրութեան մէջ կը պակսի այդ դաւանութիւն, ինչպէս նաև ուրիշ քանի մի աղօթքներ։ Ասանկ չի գտնուիր իմ ձեռքս եղած ժամագրոց տպագրութեան մէջ որ յաւին 1837 հրատարակուած է ի Վենետիկ»...

Մալանք Երտարակուած է նաև զճառ կամ զծիսարան սուրբ Մկրտութեան յիկեղեցւոյ Հայոց, և Ֆորթիքիի տպագրին մէջ անցած է (281—301), ի մեծ Մալուոցէ հանելով և բաղդաւաճով զայն ընդ առաւ թարգմանութեան Յովսէփայ կաթողիկոսի, և ընդ ծիսարանին Մկրտութեան զոր տուաւ նմա Հայոց Երտարակուած արքեպիսկոպոսն, որոյ հաւանութեամբ ու վաւերացմամբ տպուած է։

Վեցերորդ ճառն է Կարգ աստուածային պաշտօնի յեկեղեցւոյ Հայտարարեայ թարգմանուած ներածութեամբ մը ու ծանօթութիւններով որ և կը գտնուի նաև հայ և անգղիական լեզուով, տպագրեալ ի Լոնտոն ի 1887 (Gilbert et Rivington) խնամք Եսայի վարդապետի Աստուածատրեանց. յառաջանին մէջ կը ծանուցանէ թէ հայ խորհրդատետրը արդէն երկու անգամ թարգմանուած է յանգլիական. առաջինը թարգմանիչն է Բլաքմոր (Blackmor) երէցն Տոլորուրդի—Արդուրիսի հայ արքեպիսկոպոսի ձեռքով եղած ուսու թարգմանութեան վրայէն, և երկրորդին Ս. Կ. Մալանք երէց, կոստանդնուպոլիս տպուած է այս սկզբնագիր մը վրայ՝ հրամանաւ Արքիանուպոլսեցի Պաղոս պատրիարքի։ Հայկականին համար հրատարակողն օրինակ առեր է 1761ին Զմիւռնիոյ եղած տպագրին ու 1813 յԵրտարակուած. իսկ անգղիականին համար կըլտէ թէ նախամեծար սեպեր է Մալանքի թարգմանութիւնը՝ նկատելով հաւատարմութիւնն ու ոճոյ ընտրութիւնը։

Եթերերորդ ճառն է Հրահանգ քրտածեալ հառապ Եկեղեցւոյ Հայտարարեայ ի Մալանք մալ գիտարուտ, և տպագրեալ ի հայ լեզու ի Մոսկուա յամի 1850 հովանաւորութեամբ Ներսէս Ե կաթողիկոսի, Հետաքննելի գրուած մը ի ծանօթութիւն հաւատոյ Հայ ժողովուրդ։

գեան: Մալանի Թարգմանութիւն Հրատարա-
կուած է ի Occasional Papers of the Ea-
stern Church Association. (Londres, Ri-
vington, 1869).

Ութերորդն և վերջին գլուխ խօսի հայ և
յոյն եկեղեցեաց իրարմէ ունեցած տարբե-
րութեանց վրայ: Տպագրեցաւ նաև Արևե-
լեան եկեղեցեաց ընկերութենէն, ինչպէս կը
ժանուցանէ Մալան յ'էջ 241 Ֆորթլիքի
երկասիրութեան, բայց մեզ անկարելի եղաւ
գտնել զայն: Հետաքննական և ոճով գրուած
մ'է Մուրաւիէի, ոչ միայն վարդապետա-
կանաց տարբերութեանց վրայ որովք իրարմէ
կը զանազանութիւն հայ և յոյն եկեղեցիք, այլ
նաև այն ամենայն շանից որ եղած են ի միա-
բանել այս երկու եկեղեցիքը, և մանաւանդ

ի Ներսիսէ Կլայեցեոյ կաթողիկոսէ, և ի
համեմուն արքեպիսկոպոսէն Լամբրոնի: Այս
տեղեկութիւն թարգմանուած է ի ճանապարհ-
հորդարան գրոց Մուրաւիէի ի ռուս (Հատ.
թ. 206-251):

Աւելորդ է մեզ անդրադարձնելը թէ Մա-
լան մեծ ծառայութիւն մը մատոյց Հայոց՝
իրենց վարդապետականքը և ազգային եկե-
ղեցեոյ սկզբունքը այսպիսի պայծառ կերպով
մը անգլիական հասարակութեան ներկայա-
ցընելով: Դժբաղդարար այս թարգմանու-
թիւններէն շատերը՝ հիմա ձեռք ձգելը դը-
ժուարին է անգիւտ ըլլալուն, և յուսալի է
որ զանոնք միացընելով նոր տպագրութիւն
մը ըլլայ շուտով:...

(Շարայարելի)

Ը Ն Դ Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ռ Ո Ւ Ս Ի Ո Յ

ժԵ.

(Տես յ'էջ 222)

Ամուսնոսրիսնք ի Տարեւ: — Ճաշ առ Օրրէլեան Սոչդան-բէկի: — Մեկնումն ի
Տարեւոյ: — Զանկեզուրի գեղեցիկ անտառք: — Կիոք Մաշտաշայ: — Պղնձագոր-
ծոսրիսն: — Ժամանումն ի Հաճիճոր: — Բաշգնդ: — Պղնձահանք և ճոշարան ի
Գատար: — Հալիճորի բերդ: — Խոշսոցոսայ լեռք:

Տասուերկու կամ տասուիրեք տարուան
հասակին՝ աղկիւնք կ'ամուսնանան ի Տաթեւ,
իսկ մանչերը տասնուհինգ տարուան: Այն
առթիւ նորահաս կանայք կը սկսին քոջ դուր-
ժածել, ու բերանին վարչամակաւ ծածկել:
Խիտտ երիտասարդ ըլլալուն, առիթ տարի-
ներն նոր ամուսինք իրենց ծնողաց տունը կը
բնակին. յետոյ առանձին գերդաստան ձևա-
նալով, ուղածնուն Համեմատ կ'ապրին: Ընդ-
հանրապէս բազմաթիւ են ընտանիք, ու ինն
կամ տասը որդւոց տեալը: Գործածած որ-
րանը՝ Համեմուն է Կովկասեան գաւառնե-
րէն մինչև ի Սիւրիա սովորական եղածնե-
րուն. ուր ամուր կերպով կը հաստատեն մա-
նուկը, և մայրն կը դիեցընէ զնա առանց իր
փաբրիկ անկողնէն հանելով անհանգիստ ը-
նելու զնա:

Երեկոյն կը նշէնք ի տան Օրրէլեան

Սոչդան-Բէկի: Իւր կին, երկուտ հայուհի
մը, կանանոցէն դուրս չելլեր: Շատ լաւ կեր-
պով պատրաստուած համեղ ֆիլ-է եղբը,
մեր դիմաց կը դնեն ոչ նուազ համեղաճաշակ
կերակրոյ պնակ մը, բրնձոյ և մանրած մոյց
գնտիկներ, որթոյ տերեւներով պատասած:
Զարմանքով կը նկատեմ զիսմայիլ-բէկ, որ
գրեթէ ինք միակ կը լափէ իրեն սիրելի այգ
կերակուրները: Իրաւ է որ իրմէ շատ վար-
չիմնա... Քաղցր եղբայրակցութիւն մը կը
տիրէ հրաւիրելոց պնակաց, դգալի ու պատա-
ռաքաղներու մէջ. մէկ գաւաթ մը միայն կայ
որ ձեռքէ ձեռք կ'անցնի:

Յաւել 2. — Այսօր կը մեկնիմք ի Տաթե-
ւոյ, Զանկեզուրի լեռնապաշտին խորը այցե-
լելու: Առաւօտեան ժամը վեց ու կիսուն կա-
րաւանն կը շարժի: Փեղեցիկ է օդը. ու ա-
րևուն ճառագայթից տակ հայեւոյ մը նման